

Ա.Ս.Ֆ.Հ.-Ի Հ.Ի.Ի. ԿՐԵՄՈՎ  
ԿՈՄԻՏԵ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՎԱՅՐԻԱՅ  
ՀՈՒՄՈՒՅԹ

H.T.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻՑՅՈՒՐՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԻՇԼԻՍ—1935 թ.

30 JUL 2010

Ա.Ս.Ֆ.Խ.Հ. ԺՈՂԿՈՄԽՈՐՁԻՆ ԿԻՑ ՄԹԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

634.987

S-9.2

մի

Վ. ՏՈՒՆՅԵՎ

# ԱՐԺԵՔԱՎՈՐ ՎԱՅՐԻԱՃ ՀՈՒՄՈՒՅԹ

ՊՏԾՈՒՂՆԵՐ ՅԵՎ ՀԱՏԱՊՏԾՈՒՂՆԵՐ

ԽՈՒՐՄԱ, ՆՈՒԹ, ՄՈՅ, ՇՈՐԵՆԻ, ՍՊԱՐԱԿ, ՅԵՎ  
ՈՒՐԻԵՆԵՐԸ

380/4  
380/4

Խմբ. պրոֆ. դ. ՎԻՆԱԳՐԱԴՈՎ-ՆԻԿԻՏԻՆԻ

ԹԻՖԼԻՍ

1936



24 AUG 2013

20534

Պատասխանատու խմբ. Հ. Նեկոյանց  
Տեխ. խմբ. Ի. Ի. ՏՐՈՒՖԵՆՅԱՎ  
Թարգմ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆՅԱՆ

Տպարան «Տեխնիկա» դա Շրոմաճ, Կեցլուվելիի փ. № 5  
Պատվեր 818 Գլաւվեր 1328 Տիբաժ 2150

Մարդուս սնունդի և մեր մարմնի կենսունակությունը պահապանելու համար բանջարեղենի հետ միասին, հսկայական նշանակություն ունեն պառուղներն ու հատապտուղները:

Այն ժամանակ, յերբ մարդն առանց մսեղեն և ձկնեղեն կերակուրների կարող և յերկար ժամանակ զիմանալ լրիվ պահպանելով իր աշխատունակությունը, ընդհակառակը, բուսեղեն բարձր վորակ կերակուրի բացակայությունը կամ միայն նրա անբավարար լինելը, առողջության վերաբերյալ շատ շուտ տալիս ե վնասակար հետևանքներ:

Բուսական կերակուրն ընդհանրապես, պառուղներն ու հատապտուղները մասնավորապես, շատ մեծ նշանակություն ունեն մարդու կանոնավոր սնունդի համար:

Տանձը, խնձորը, ծիրանը, կեռասը, բալին, խաղողը, ընկուղը, շագանակը, խուրման, նուռը, մոշը, ծորենին, սպարակը և շատ ուրիշ պառուղներ ու հատապտուղներ մարդուն տալիս են ամենաօգտակար մննդատու նյութերը, նորանց թվում, այսպես կոչված վիտամիններ, վորոնի նպաստում են հասակի աճմանը, որգանիզմի ամրացմանն ու պահպանելուն:

Բացի դրանից, պառուղների և հատապտուղների մեծագույն մասի բացառիկ դուրեկան համ ունենալու պատճառով, նրանք ուտվում են շատ մեծ ախորժակով և բավականությամբ, ու մեր որգանիզմն ել արագ կերպով մարսում է: Սակայն, չնայած աշխատավորության պարենա-մատակարարման համար պառուղների ունեցած այդքան մեծ և կարևոր նշանակությունը, մենք նրանցից գեռ բավականաչափ չունենք: Վորպեսզի այդ բացը վերացվի, խորհրդային իշխանությունն անց և կացնում պաղային և հատա-

պաղային տնտեսությունները սոցիալիստականուրեն վերակառուցելու, բերքատվությունը բարձրացնելու, պտուղների և հատապտուղների տեսակները լավացնելու, այդիների համար հատկացրած հողամասերի տարածությունն ավելացնելու վերաբերյալ մի շաբաթ միջոցառումներ, և դրանով հենց պտուղների և հատապտուղների քանակությունը աշխատում և ավելացնել աշխատավորության ընդհանուր սնունդի մեջ:

Սակայն, խորհրդային աշխատավորների բարեկեցիկ պայմանների լավացումը և սպառման պահանջի աճումը ավելի արագ տեսմակերով են ընթանում, քանի թե այգեգործության զարգացումը՝ մուրի հետևանքով ել առաջժմ մրգերի մատակարարումը դեռ շատ և հետ մնում գործածիղ պահանջից:

Տանձը, խնձորը, դեղձը և ուրիշները հանդիսանում են բազմամյա կուլտուրաներ, վորոնք առատ բերքատվության համար պահանջում են 6—25 տարի ժամանակամիջոց:

Այստեղից ել հասկանալի ե, թե ինչու աշխատավորներին այգեգործական արտադրանք մատակարելու գործի մեջ մեզ մոտ մինչև այժմ չկա խիստ բեկում, և ընդհակառակը, բանջարեղեններով մատակարարելու խնդիրը, վորոնք հանդիսանում են մի ամյա կուլտուրաներ, արդեն հիմնականում, մի 3—4 տարվա ընթացի քում լուծվել ե:

Այդ բոլոր պատճառներից յերեսում ե, վոր վայրիաճների գերը շատ մեծ ե, վորոնք Անդրկովկասի պայմաններում տալիս են մինչև 200 հազար տոնն ընդհանուր մթերք, կուլտուրայինների 300 հազար տոննի դիմաց: Այսպիսով ուրեմն, Անդրկովկասում վայրիաճների տեսակարար կշիռը շատ բարձր ե. նրանք կուլտուրային պտղայգեգործության հանդեպ կազմում են 37% միջակ բերքատվության դեպքում, և մինչև 60% լավ բերքատվության դեպքում, ու կարող են շատ զգալի ոգնություն ցույց տալ աշխատավորության ընդհանուր պտղային մատակարարմանը:

Այս գրքույկի մեջ խոսվում ե մի շաբաթ պտուղների և հատապտուղների մասին, վորոնք շատ մթերողների կողմից համարվել են վորպես յերկորդական և ուշագրության չեն առնվել մթերքներով մատակարարելու պլանները կազմելիս, այն ինչ, վայրիաճ պտուղները կարող են հսկայական արժեք ներկայացնել Անդրկովկասի ընդհանուր սննդային հաշվեկշռի մեջ:

Ահա մի քանի պտուղների և հատապտուղների մոտավոր միջին բերքն Անդրկովկասում:

ա) Մոշը . . . . .	7000	տոնն
բ) Հապալարը . . . . .	3100	տոնն (առանց տերեկների)
գ) Խուրման . . . . .	2200	տոնն
դ) Նուռը . . . . .	1600	տոնն
ե) Սպարակը . . . . .	600	տոնն
զ) Ծորենին . . . . .	400	տոնն

Իսկ ընդհանուր միջին բերքի ժամանակ Անդրկովկասում առացված է մինչև 15900 տոնն: Լավ բերքի ժամանակ այդ թիվը կարող ե մեծանալ 2—3 անգամ:

Վարպեսզի ավելի ակներն կերպով տանը հասկացողություն բերքի այդ քանակության վերաբերյալ, բերքնը հետեւյալ հասարակ հաշվիվ:

Յեթե կարիք իներ վերահիշյալ 15900 տոննը տեղափոխել յերկաթուղով, այդ գեղքում կը պահանջի վոչ պակաս հիսուն գնացք յուրաքանչյուրը կազմած հիսուն վագոնից:

Սույն գրքույկի նպատակը կայանում է նրանում, վորպեսզի Անդրկովկասում բռնողով մի քանի վայրիաճ պտուղների և հատապտուղների նշանակությունը ցույց տա, վորոնք հսկայական գեր կարող են խաղալ աշխատավորությանը պարեններով մատակարարելու գործում և հենց զրանով ել լուծել XVII կուսհամագումարի ցույցունքներից մեկը, այսինքն «յերկրորդ հազարակի վերջում սպառման չափի քանակությունը պետք ե ավելանալ յերկու և կես անգամ»:

## Խ Ո Ւ Ր Մ Ա

Խուրմայի պտուղները մութ-կինամոնագույն են գործ փառուի 1—1½ սանտիմետր տրամագծով:

Մինչև լրիվ հասունանալը պտուղները խիստ մածուցիկ են, բայց հասունանալուց հետո, դեռ ծառի վրա բռագայի յեն յենթարկվում և ստանում են յուրահատուկ քաղցրավուն—մեղրային համ:

Տեղական բնակչությունը խուրման գործ ե ածում մեծ քանակությամբ թարմ գրութամբ: Խուրմայի մի զգալի քանակությունը չորացնում են, և առանձնապես ահագին քանակությամբ գործ ե ածում գոշաբ (բակմաղ) պատրաստելու համար:

Դոշաբը—դա խուրմի թանձը յեփած հյութն ե, վոր ստացվում ե մաղի վրա տրորած խուրմայից:

Խուրմի գոշաբը վոլխարինում եւ շաքարին, դրա համար եղ տեղական բնակչության կողմից մեծ պահանջ կա խուրմայի գոշաբի: Դոշաբը պահում են կավե ամաններում:

Չորացրած խուրման տեղական բնակչության ամենասիրած և տարածված քաղցրավենին ե: (Ընդհանրապես արկելքում ընդունված ե խուրման ուտել այնպես, ինչպես Ռուսաստանում արևածաղիկը):

Հին ժամանակ Անդրկովկասից չորացրած խուրման բաշվական մեծ քանակությամբ (հազար տոններով) արտահանվում եր Յեղիպտոս:

Խուրմայի կորիզը, այսպես կոչված ակտիվացրած ածուխ ստանալու համար հանդիսանում ե հիանալի հումույթ, վորը գործ ե ածվում մանդի արդյունաբերության մեջ վորպես զտիչ (Փիլտր), բացի գրանից, խուրմայի կորիզը գործածվում ե նաև սուրճի արդյունաբերության մեջ:

Արտադրության մեջ խուրմի պտուղները կարող են ողտաշ գործվել վորպես բարձր վորակ ունեցող հումույթ հրուշեղնի և շաքարեղնի արտադրության մեջ, մասնավորապես պաստերներ և դրա նման այլ նյութեր պատրաստելու համար: Սակայն խուրմայի մթերումն ու ոգտագործումը պահանջում է պահպանել ուժեղ մաքրություն և խնամք, վորպեսզի այդ միջոցով նախազգուշաց կերպով կեղառովելուց խուրմայի վերին աստիճանի քնքուշ պտուղները և մանավանդ վիշանալուց:

Վայրի խուրման ճանաչված ե վորպես լավ պատվաստ այսպես կոչված յապոնական խուրմայի համար, վորի պտուղներն այնքան դուրեկան են, քնքուշ և համեղ:

Վայրիաճ (սև) խուրման մոտենում ե մերձարևագարձային բույսերին և բնական ե, վոր Միության ուրիշ շրջաններում տարածված չե: Ամենից ավելի կենարոնացած հումույթային բազան ճանաչված ե Աղբբեջանի Աստարայի և Լենքորանի շրջանները: Յերկրորդ, մոտավորապես համարժեք բազան հանդիսանում են Վրաստանն ու Աջարիստանը:

Վոչ մեծ քանակությամբ խուրմա հանդիպում ե Կախեթիայի անտառներում (և այդիներում)՝ (Արևմտյան Վրաստան), նույնպես և հարեւան Բելոքանի, Զաքաթալի, Կախի, Նուխու, Վարդաշենի, Կուտահենի շրջաններում (Աղբբեջան): Վայրիաճ խուրմայի պտուղները մթերելու տեսակետից վերջին թվածները չեն կարելի համարել կարեռ բազաներ, բայց նրա հանդիպելն այդ:

Մեղերում յապոնական խուրման նույն տեղերում աճեցնելու համար հանդիսանում ե ցուցանիշներից մեկը: Բերքաբեր տարին ամբողջ Անդրկովկասում վայրի խուրման կարող ե տալ 5—7 հազար տոնն պտուղ:

Խուրման անտառային ծառ ե, բարձր մինչև 25 մետր բարձրությամբ և մի մետր տրամագծով (բունը):

Պտուղներն հասունանում են վոչ միաժամանակ, դրա համար ել պտուղների հավաք կարելի յե կատարել ամբողջ նոյեմբեր ամսի ընթացքում: Հավաք սովորաբար այսպես ե կատարվում: Հավաքողը բարձրանում է ծառի վրա և թափ տալիս ճյուղերը: Հավաք կազմակերպելու մեջ կարելի յե մտցնել վորոշ վերակաղմություն, այսինքն, պտուղները թափ տալ վոչ թե ուղղակի գետին, այլ քաթանի կամ բրեգենտի վրա, վորովինետև թափ տալու ժամանակ բերքի մի զգալի մասը մնում գետնի վրա չհավաքած և կորչում ե:

Թարմ գրությամբ պտուղների տեղափոխությունը կատարվում ե կթոցներով, վորոնք հյուսված են բարակ շյուղերից և ունեն շուրջ տված ու կտրած կոնուսի ձև: Այսպիսի յերկու կթոց բառնալով ձիու վրա, առանց վնասելու պտուղներին, հնարավոր ե այն հասցնել թարմ գրությամբ մինչև մոտակա շուրջ կամ վերամշակման կետը:

Անդի արտադրությունը մինչև այժմ լուրջ կերպով չի ոգտագործել խուրմայի պաղաքերքը: Տեղական բնակչությունը հավաքում ե բերքի 20—40%՝ մնացածն ամբողջովին կորչում ե տեղն ու տեղը:

## Ն Ո Ւ Ռ.

Վայրիաճ պտուղների մեջ Անդրկովկասում ամենաարժեքագորներից մեկն ե հանդիսանում նուրբը:

Նուրը գնահատվում ե իր մեջ պարունակած հյութի պատճառով, վորը շատ բարձր թթվություն ունի բացառիկ գուրեկան հոտով և յուրահատուկ պարզ գույնով:

Ամերիկական շատ պտղագործներ հաշվել են, վոր ավելի ձեռնուու յե աճեցնել նուր, քան թե նարինչ:

Համաձայն ընկ, Ստրեպկովի ցուցանուքի, այնտեղ (Ամերիկայում) մեկ ակը (0,4 հեկտար) նուրի ծառով տալիս ե 500 դոլար ընդհանուր արդյունք 75 դոլար ծախսի հանդիպել:

Վայրի նուռը տարբերվում է կուլտուրականից յերկու հիմնական ցուցանիշներով. առաջինը՝ վայրի նուռը մանր և (3—6 սանտիմետր տրամագծով), կուլտուրայինը խոշոր (8—10 սանտիմետր և ավելին), յերկորդը՝ կուլտուրային նուռը համեմատաբար ավելի յերաքար պարունակում և պակաս թթվություն ունի, հետևապես ավելի պետքական թարմ դրությամբ գործածելու համար, իսկ վայրի նուռը պարունակում է համեմատաբար պակաս շաքար և ավելի թթվություն, պարզ ե, վոր ավելի արժեքավոր է վերամշակման համար, քան կուլտուրային նուռը:

Նուռու հոծության նուռի քիմիական անալիզը.

	Թթվություն ինձորի համեմատ.	Չաքար ընդհանուր
Վայրի նուռը	4,42%	13,16%
Կուլտ. նուռը	0,61%	10,10%

Կուլտուրական նուռ աճում է Անդրկովկասում ընդամենը մի քանի հարյուր հեկտարի վրա, իսկ վայրի նուռ—համարյա թե 2000 հեկտարի վրա: Մրանից ել պարզ ե, վոր անհրաժեշտ և ավելի ուշագրություն գալձնել վայրի աճ նույնու վրա, վորպես վերամշակման համար բարձր վորակի և մասսայական հումույթ:

Խորհրդային Միության մեջ նուռ կա կովկասում և միջին Ասիայում:

Անդրկովկասում վայրիաճ նուռի հիմնական հումույթային բաղան Լենքորանի հոծությունն ե. Աստարա քաղաքից գեղի հյուսիս, Կասպից ծովի ափի յերկարությամբ կան նույնու մի շարք մաքուր թալուկներ վեցհարյուր հեկտար ընդհանուր հողամասով:

Մեծ քանակությամբ վայրի նունի կա նաև Ադրբեջանի Սամուխի և Աղդաշի շրջաններում:

Նուռը վերամշակման ե բերվում նրանից հյութը հանելու համար, վորը կախված այն պատրաստելուց և խտացնելուց, ոգտագործում և տարբեր նպատակների համար:

Ի միջի այլոց, նուան հյութն իր մեջ պարունակում է հականդախտային ուժեղ հատկություն, շատ լավ հագեցնում է ծարավը, գրգռում ախորժակ, և վորպես բժշկական միջոց այն տալիս են դողերոցով հիվանդներին:

Նուան լավ յեփած հյութը լայն կերպով գործ և ածվում խմելու ջրեր պատրաստող արտադրության մեջ:

Նուռից կարելի՛ յե ստանալ նաև կիտրոնի թթվաղ:

Վերամշակելու ժամանակ ամենադժվար պրոցեսն հանդիսանում է հյութը բաժանելը: Այդ գործը բարդանում է և նրանով, վոր չի կարելի գործածել ճպմիչ կամ մետաղի մասեր ունեցող այլ հարմարացումներ (կամ մեքենա), վորովհետև նուան հյութը ոքսիդացման շատ խիստ հատկություն ունի: Մինչև այժմ նուան հատիկները կմեջից առանձնացնելու համար ամենատարածված միջոցն հանդիսանում է փայտի գդալը, վորը շատ և թանգացնում նուան հյութը պատրաստելու պրոցեսը:

Բնակչությունը նուռն օգտագործում է գլխավորապես նաշաբար պատրաստելու համար, վորը մսով և ձկով պատրաստած կերակուրների համար հանդիսանում է լավագույն համեմունքը:

Նաշաբար—դա նուան հյութն և մեղմ կրակի վրա դանդաղ շոգիացրած (միջի ջրային մասը) մինչև սերոպանման դրության հասնելը:

Վայրի նուենու թուփն հասնում է մինչև 3—4 մետր բարձրության: Մեկ թփի վրա սովորաբար լինում է 25-ից մինչեւ 150 պտուղ, բայց խնամքի վերաբերյալ մի քանի միջոցառումներ ձեռ առնելով, ինչպես որինակ մոտը գտնված շվաք տվող ծառերը նոսրացնելով, և իրեն ավելորդ ճյուղերը կտրելով, կենդանիները կոխ տալուց և բնակչության կողմից նրա ճյուղերն անտեղի կոտրելուց պաշտպանելով, դժվար չե բարձրացնել թփի բերքատվությունը 4-ից 5 անգամ:

Հավաքելու ժամանակ ձեռով անմիջապես պոկում են նուռը թփից, այդ ժամանակ ճյուղերը թեքելու համար ոգտվում են կեռագույն ձողերով:

Պտուղները միենույն թփի վրա հասունանում են տարբեր ժամանակներում—սեպտեմբերի վերջերից մինչև նոյեմբերի սկիզբը, դրա համար ել անհրաժեշտ և, վոր հավաքողն այդ ժամանակի ընթացքում հավաքու համար յուրաքանչյուր թփին մոտենա մի քանի անգամ:

Պտուղները պետք ե պոկել հասած, կամ համարյա թե հասած դրությամբ, վորովհետև կանաչ պտուղներից ստացված հյութը շատ շուտ և փշանում: Դեռ լավ չը հասած պտուղները հասունանում են պահելու ժամանակ: Զհասած պտուղները միայն այն ժամանակ կարող են ատարվել վերամշակման, յերբ նրանք չորանոցներում բոլորովին չորացած են:

Նուան պտուղները կարելի յե պահել մոտավորապես կետ  
տարի, բայց դրա համար հավաքելու ժամանակ պետք է նրանց  
մի փոքր չորացնել:

Տարայի վերաբերյալ նուռը պահանջկոտ չե: Յեթև նրանք  
վորոշված են շտափ վերամշակման համար, այդ գեղաքում կարելի  
յե տեղափոխել նրանց խսիրե և կտորե պարկերով, կթոցների  
մեջ, խսկ յեթե պետք են նրանց մի քանի ամիս պահել, այդ դեպ-  
քում լավ ե տեղափոխել արկղների կամ կթոցների մեջ:

## Մ Ո Շ. (ՅԵԺԵՎԻԿԱ)

Անդրկովկասում մոշն հանդիսանում ե ամենից շատ տաւ-  
րածված բույսերից մեկը: Այն առատությամբ հանդիպում ե ա-  
մեն տեղ՝ ճանապարհների յերկարությամբ, անտառների բացա-  
տներում, ամայի տեղերում, հրդեհված վայրերում և այլ դրանց  
նման տեղերում:

Անդրկովկասում լավ տարիներում մոշի բերքն հասնում ե  
վոչ պակաս 20.000 տոննի, այդ քանակության մոտ 50% ը ընկ-  
նում ե Վրաստանին, 40% ը Աղբբեջանին և 10% ը Հայաստա-  
նին:

Ներկայումս համարյա թե չի ոգտագործվում մոշի բերքը:

Ամբողջ ամառվա ընթացքում մոշը լինում ե բոլոր շուկանե-  
րում, բայց այդ ամենաշնչին տոկուն է չնավաքածի և կորածի:

Ժողովուրդը վոչ մեծ քանակությամբ այն գործ ե ածում  
թարմ գրությամբ, ոգտագործում են նույնպես և կիսելների, մու-  
րաբանների, խմորեղենի մեջ դնելու համար և այլն:

Մոշը չորացրած զրությամբ գործ ե ածվում կամպոտի հա-  
մար և վորպես թեյի սուրբագատ:

Արտադրության մեջ մոշը կարելի յե գործածել մուրաբայի,  
խմորամիջուկի, անալիկոլ խմիչքների արտադրության մեջ:

Պետք ե առանձնապես շեշտել, վոր մոտիկ ապագայում մո-  
շի յեփած հյութը բնակչության կողմից առաջ կը բերի մեծ պա-  
հանջ:

Մոշի հավաքը կարելի յե կատարել հուլիսի կեսերից մինչև վ  
հոկտեմբեր ամիսը, բայց նկատվել ե, վոր ամառվա հավաքի հա-  
տապտուղներն ավելի շաքարավուն են, քան թե աշնանը:

Ճյուղերի վրա ունեցած փշերի պատճառով մոշ հավաքելը

բավականին դժվար ե: Մեկ հոգին որվա ընթացքում կարող է  
հավաքել 10-20 կիլոգրամ հատապտուղ:

Հավաքելու ժամանակ առանձին ճյուղերը դեպի իրեն քա-  
շելու, մոտեցնելու համար ցանկալի յե ոգտվել կեռագլուխ ձողե-  
րով: Այստեղ կարելի յե մտցնել վորոշ կարգավորում հավաքի-  
ժամանակ, այսպես որինակ՝ հով յեղանակներին մոշ հավաքելու  
ժամանակ կարելի յե հագնել ամուր պարուսինից կարած շոր,  
վորը հնարաւորություն կտա  $1\frac{1}{2}$ -2 անգամ ավելի յուրացնել  
պաղի բերքը, վորովհետեւ այդ շորը հնարավորություն ե տալիս  
մանել թափուղների խորքը. թեթև հագուստով փշերն այդ չեն  
թույլ տա: Հասարակ շորով փշություն պատճառով անհնարին  
ե այդ անել:

Սովորաբար մոշի հիմնական հավաքն ընկնում ե ամառվա  
շոր, այրող որերին, յերբ անտառների յե դառնում հավաքողների  
մարմինը ծածկել պինդ պարուսինով կամ բրեզենտով: Այդ գեղ-  
քում նպատակահարմար կլինի մասնակի կերպով ոգտվել բրեզեն-  
տի պաշտպանությունից՝ գովազների և թեհոցների ձևով, կամ  
ուղղակի մի կտոր բրեզենտով ծածկել թփի մի մասը, վորը հնա-  
րավորություն կտա առանց փշերից վախենալու հավաքել թփի  
ներսում գտնված բերքը:

Հավաքելիս տարայի կողմից ամենաընդունելին հանդիսա-  
նում ե դույլը (փոքրիկ), այդ դույլերի մեջ ել առանց ուրիշ  
տարայի միջ լցնելու պետք ե հասցնել մոշը սպառողներին:

Հավաքելու ժամանակ վոչ մի գեղքում չի կարելի գործա-  
ծել զամբյուղներ, վորովհետու մոշի փշերը կառչելով նրանց խիստ  
կերպով դանդաղեցնում են հավաքողի աշխատանքը. բացի դրա-  
նից, մոշի հասած պառողները շատ հյութալի և քնքուշ են, գրա-  
համար ել ճյուղերից պոկվելուց հետո խսկույն թողնում են իրենց  
հյութի մի մասը, և յեթե նրանք հավաքած են զամբյուղի մեջ,  
այդ գեղքում հյութը ծորելով զամբյուղից իզուր կորչում ե: Այդ  
պատճառով ել մոշ հավաքելիս առավելությունը տրվում ե դույ-  
լին, քան թե զամբյուղի գործածությանը:

Տեղափոխելիս քիչ յերկար ճանապարհորդության մոշը չի  
դիմանում, դրա համար ել պետք ե վերամշակման յենթարկվելու  
մոտակա վերամշակման կետերում:

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՊԱԼԱՍԻ (ԶԵՐՆԻԿԱ)

Կովկասյան հապալասին վոչ շատ մեծ թփիկ և  $1\frac{1}{2}$ —2 մետր բարձրության հասնող:

Արևմտյան վրաստանի, Աջարիստանի և Աքսազիայի հաճարենիների և յեղենիների անտառներում կազմում է համատարած թափուղներ: Անդրկովկասում հապալասի ամբողջ հողատարածությունը հասնում է մի քանի տասնյակ հազար հեկտարի:

Պտուղներն ուղղակի ձեռքով պոկում են թփից, տեղավորում զամբյուղների մեջ և նույն զամբյուղներով ել բերում շուկա:

Հապալասի պտուղները տեղական շուկայում պատահում են բավական մեծ քանակությամբ: Այդ հատապտուղները գործ են ածվում կերակուրի մեջ թարմ գրությամբ, նույնպես և յեփած մուրաքայի, սիրոպի, պտղահյութի և այլ ձեռքով: Հապալասին լայն կորպով ոգտագործում են նաև բժշկական գործում: Չորացած հապալասից պատրաստած կիսելը փորահարինքի և մարսուղության գործարանների ուրիշ տեսակի խանգարումների գեպ-քում հանդիսանում ե բժշկական լավ միջոց:

Ավելի մեծ արժեք ներկայացնում են հապալասի տերենները, վրոնց ոգտագործում են այսպիս կոչված «հապալասյան թեյ» (բրունիչի թեյ) պատրաստելու նպատակով:

Թեյ պատրաստելու համար հավաքում են հապալասի մատաղ, մոտ ժամանակում բացված տերենները, թոշնեցնում նրանց ստվերուտ տեղերում և հետո, վոլորեկով բորֆում են յերկաթե թիթեղների վրա: Տերենները հավաքելու ժամանակ տարայի համար ծառայում են պարկերը: Ի նկատի ունենալով նրա մթերման բարձր գինը, շատ ոգտակար ե զրադիվել հապալասի տերեններ հավաքելու գործով:

Հապալասի տերենների և պտուղների մթերումն Անդրկովկասում անցնում է 2000 տոննից, սակայն համեմատած յեղածի հետ, այդ նրա չնչին քանակությունն է:

## ԾՈՐԵՆԻ (ԲԱՐԲԱՐԻՍ)

Ծորենին միջահասակ փշոտ թփիկ է, իր փոքրության հետեւանքով թույլ է տալիս պտուղները հավաքել ձեռով ուղղակի ձյուղերից: Տալիս է կարմիր հատապտուղ կախված վողկույզնե-

րով, Բուսնում է արևոտ տեղերում, քարքարոտ հողերում: Ծորենու մի քանի տեսակները բուսնում են նույնիսկ աղաճողերում:

Աղբբեջանում, Դուրայի անտառաբդյունաբերական տնտեսության մեջ շատ կա ծորենի (հաղար հեկտարից ավելի): Նրանից շատ կա Արևմտյան վրաստանում և Հայաստանում:

Ծորենու հատապտուղները վոչ զդալի քանակությամբ յերեսում են շուկայում սեպտեմբեր ամսին: Անդրկովկասում ծորենու բերքի շատ չնչին մասն է յուրացվում:

Հավաքելու ժամանակ հատապտուղներն անմիջապես քաղում են ձեռով թփից և գնում դույլի մեջ: Զամբյուղ գործածել խորհուրդ չի տրվում, նրա համար, վոր ծորենու թուփը շատ փշոտ է, բացի գրանից, նրանք բուսնում են ուրիշ փշոտ բույսերի հետ միասին, իսկ այդպիսի թափուղները զամբյուղով անցնելը շատ գժվար է, զամբյուղը կկառչի փշերից և կդժվարացնի հավաքը:

Ծորենու հատապտուղներն իրենց մեջ մեծ քանակությամբ թթվություն են պարունակում (ինձորի հետ համեմատած  $6,62^{\circ}/_0$  շաքարային մաս  $5,36^{\circ}/_0$ ). Իսկ սերմերը շատ հարուստ են յուղով (յուղ պարունակում է մինչև  $18^{\circ}/_0$ ):

Ի նկատի ունենալով նրա բարձր թթվությունը, սնունդի արդյունաբերության մեջ ծորենու պտուղները մեծ նշանակություն ունեն:

Նրանցից պատրաստում են դոնդող, սիրոպներ, խմիչքներ, հրոշաշաքարավենիքի արտադրության մեջ են գործածում, յերշիկապուխտի արտադրության մեջ, նույնպես և մուրաբա պատրաստելու համար: Տեղական բնակչության մեջ շատ է տարածված կերակուրի մեջ գործածելու համար: (Վրացական «սոցերիւմ» ծորենու յեփած հյութն է):

Բացի վերոհիշյալ հատապտուղներից, կան նաև մորի, յելագ, մոռ, վորոնք Անդրկովկասում ուժեղ թափուղներ չեն կազմում և մասսայական հավաքի համար արժեք չեն ներկայացնում, դրա համար ել հանդիսանում են տեղական գործածական նշանակություն ունեցող մթերքներ:

## ՍՊԱՐԱԿ (ԱՇՏՈՐ, ՍՈՒՄԱԽ)

Սպարակը վոչ շատ մեծ թուփ է, փոքր, մուգ-կարմրավուն պտուղներով: Տարածված է ամեն տեղ՝ չոր, արևոտ տեղերում,

քարքարոս հողամասերում: Անդրկովկասում սպազակի տարած-  
ման ընդհանուր մտկերեսը հաշվում և հազարավոր հեկտարնե-  
րով: Պտղի կեղեն իր մեջ պարունակում ե գինու թթվութ: Պտուղ-  
ները գործ են ածում քացախն ուժեղացնելու համար և վորպես  
շատ թթու համեմունք կերպուրների մեջ: Սպարտակի պառուղներն  
ուղղակի պոկում են թփից/ձեռով և գարսում դույլի կամ մանր  
ճյուղաձք ունեցող գամբյուղների մեջ:

Սպարտակը մեծ չափով կարող և գործածիկ հրուշագործական  
արտադրության մեջ վորպես բարձր թթվություն ունեցող նյութ:

Տերևները գիշատիչորեն ոգտագործելու և կաշվի արտա-  
դրության մեջ գաբազման հսկութակտ ստանալու համար գործած  
արշավանքների հետևանքով, նրա թափուղներն Անդրկովկասի  
շատ ըրջաններում բավականաչափ ֆլամաված են:

## Կ Ա Պ Ր Յ Ի

Կապրցին—դա վշտ կապրցինու թփիկի ծաղկի կոկոննե-  
րըն են:

Արևմտյան Յելլուպայում, կապրցենին ամեցվում ե մեծ հո-  
ղաբաժիններում և այնտեղ այդ կուլտուրան քիչ մուտք չի տա-  
լիս: Ֆրանսիայում արդեն կապրցենու 50 տարեկան տնկարան-  
ներ կան:

Յելլուպական յերկրներում կապրցին վորպես ընտիր համե-  
մունք մեծ պահանջ ունի:

Կապրցին հիմնալի սպառվող արտահանության նյութ եւ:

Անդրկովկասում կապրցենին վայրի գրությամբ, առանց  
վորեն խնամքի առատությամբ անում և բոլոր կիսատափաստան  
և կիսանապատ տեղերում:

Կապրցենի շատ կա կատվի կայարանի ըրջանում, Շիրակի  
տափաստանում, Շամիսոր-Դանձակի ըրջանում, Լեռնային Ավառ-  
ունում Ղարաբաղում, Մուղանի, Միլի անապատներում, Դեկիչի կա-  
յարանի ըրջանում: Հայաստանում պատահում և այն համարյա  
թե ամեն տեղ:

Կապրցու հավաքն սկսվում ե մայիսի վերջերից և շարու-  
նակվում ե մինչեւ հունիսի վերջը: Իսկ յեթե գարունն  
ե և առօք, այդ գեպքում հավաքը շաբունակվում ե մինչև ոգոս-  
տոսի վերջը:

Կապրցին թփից պետք ե պոկել յուրաքանչյուր յերեք որը  
մի անգամ, հակառակ զեպքում նրանք բավականին մեծ և կո-  
պիս են գառնում և չեն համապատասխանում արտահանության  
համար վորոշված ստանդարտ չափին:

Մանր և իրենց սկզբնական գույնը պահած կապրցին վոր-  
պես բարձր տեսակի ընդունվում ե լավ գնով:

Կապրցու մթերման տեխնիկան այսպես ե. սիսեռի մեծու-  
թյամբ ծաղկի կոկոնները պոկում և պահում են շվաքում մինչեւ  
թոշները, հետո տեսակավորում են ըստ մեծության, դարսում տա-  
կառների մեջ և վրան լցնում քացախ:

Բացի ծաղկիների կոկոններից Անդրկովկասում կապրցենու  
պտուղները բանեցնում են կերակրի համար ինչպես թթու գրած  
ձևով, նույնպես և աղած գրությամբ, վորոնց անվանում են վա-  
րունկիկներ: Դրանք առայժմ տեղական դրծածության նշանա-  
կություն ունեն:

Անդրկովկասում կապրցու հումույթային բազան շատ մեծ  
է, բայց մինչև այժմ ոգտագործվում ե նրա չնչին մասը:

Բայտ հանրապետությունների և ըրջանների մի քիչ փոփո-  
խության կյենթարկի առանձին վայրիան բույսերի քանակու-  
թյան և նրանց պտուղներն հավաքելու վերաբերյալ նկարագրած  
հարցերն այս գրքույկում: Սակայն, հնարավորություններն ան-  
նշան կլինեն ընդհանուր հանրապետարում:

Դրա հետ միասին, բերքի հավաքը, տեղափոխությունն ու  
պահելը լավացնելու վերաբերյալ թված առաջարկներն անառ-  
ուային տեսակներն ոգտադրութերու խնդրով զբաղվող կոլտնտեսա-  
կան և մենատնտես աշխատավոր գյուղացիների ինքնադրձնե-  
յության կարգով կարելի յե շարունակել զգալիորեն զարգաց-  
նել և լրացնել:

Պարզ ե, վոր կազմակերպչական, մասնավորապես հավաքն  
անցկացնելու գործում, հսկայական գեր պիտի խաղա յերեսա-  
սարդությունը:

Կոմիտիտները, սկսներներն ու աշակերտությունը պետք ե  
լինեն հավաքի գլխավոր մասնակիցները: Այդ ընկերներն  
իրենք պետք ե մտցնեն և հենց տեղն ու տեղն ել այն իրա-  
գործն ըսցիոնալիզատորական առաջարկներ, վորոնք վերաբե-  
րելու յեն ձեռք բերելիք պառուղների քանակությունն ավելաց-  
նելուն, հավաքմանը և տեղափոխելու ժամանակ կորուստը պակա-

սեցնելուն, առավելագույն չափով ժամանակին հասած պատողականը քաղելուն, փշացած, թխասված և ընդհանրապես անպետք մրգներն ու հատապտուղները ջռկնչու միջոցով հավաքած ապրանքի վրակը լավացնելուն:

Քանակության և վորակի վերաբերյալ ամենալավ հետեւ վանքների հասնելու համար, ըրիգադների և առանձին աշխատակիցների մեջ շատ անհրաժեշտ և սոցմբումը, վորը հանդիսանալու յետ ամբողջ գործի զարգացման հզոր լծակը:



A standard linear barcode representing the number NL0287879.

20534

2 0 1

5

801

---

Уполномчаг СНК СССР в ЗСФСР

## Ценное дикорастущее сырье

ИЗДАНИЕ ЗАКАВКАЗСКОГО КОНВЕНЦИОННОГО БЮРО

---

Тифлис—1935 г.